



«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 53-Լ

3 սեպտեմբերի 2025 թվականի նիստի

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ ՎՊՀ) կանոնադրության 42-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի 2025 թվականի սեպտեմբերի 3-ի առցանց կայացած նիստի քվեարկության արդյունքները (8 կողմ, 4 դեմ, 2 ձեռնպահ)՝ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգը (կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 16-ի նիստում (Որոշում 23-Լ) հաստատված «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կարգը:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա.ՍՎԱԶՅԱՆ